Շամ. Պ. Ներսէսեանց Պողոս	2
Շամ. Միքայէլ Յովհաննէսեան Բասսյեանց	3 40
Շամ. Յարութիւն Ներսէսեանց	5
Շամ. Յովհաննէս Միրզաբէգեանցի ձեռամբ զանազան մարդկանցից նուէրք հաւաքուած	17
	28 40

Անդամք.

1. Անդրէաս Արքեպիսկոպոս, 2. Սահակ Աբեղայ, 3. Մեծլում բէկ Ավշարեանց, 4. Յարութիւն Համասփիւռ, 5. Պետրոս բէկ Տէր Մարկոսեանց, 6. Կարապետ Քալանթարեանց, 7. Հայրապետ բէկ Բաղրեան, 8. Միքայէլ Ղարաղաշեանց, 9. Բաղէշ բէկ Սարգիսբէկեանց, 10. Պողոս Ներսէսեանց, 11. Արտեմ Ներսէսեանց, 12. Գրիգոր Դիլտարեանց, 13. Սամուէլ Բաղրեանց, 14. Գէորգ Կամկամեանց, 15. Շահնշահ Վլասեանց, 16. Մովսէս Ռոստամեանց, 17. Մովսէս Աշուղեանց, 18. Յարութիւն տէր Եսայեանց, 19. Յովհաննէս Միրզաբէկեանց, 20. Միքայէլ Արամեանց, 21. Աբրահամ Գասպարեանց, 22. Յովհաննէս Իւզբաշեանց, 23. Ջաւատ Տէր Ստեփանեանց, 24. Հայրապետ Ղուկասեանց, 25. Յարութիւն բէկ Տէր Սարգսեանց, 26. Աստուածատուր Զաքարեանց. 27. Խուդատ Բարաղամեանց, 28 Յովհաննէս Խալիպեանց, 29. Խաչատուր բէկ Եղիազարեանց, 30. Նիկոլայ Վարդապետեան. 31 Ներսէս Աթաբէկեանց *):

Անդամուհիք.

1 Մարգարիտ Զորապետեանց. 2 Մարիամ Զորապետեանց. 3 Զառվարդ Ավշարեանց. 4 Եղիսաբէթ Համասփիւռ. 5. Զառվարդ Ղորղանեանց. 6 Ոսկի Կամկամեանց. 7 Նարկիզ Միրզաբէկեանց. 8 Թագուհի Նաջարեանց. 9 Խանում Խալապեանց. 10 Կատարինէ Ներսէսեանց. 11 Սօնա Ներսէսեանց. 12 Մարիամ Նիկիտեանց. 13 Զամբաղ Քալանթարեանց. 14 Մարիամ Իւզբաշեանց. 15 Մինայ Զաքարեանց. 16 Մարգարիտ Ավշարեանց. 17 Զառվարդ Միրզաբէկեանց. 18 Թագուհի Մարգանեանց. 19 Մարիամ Աշուղեանց. 20 Մարիամ Յովհաննէսեան Տէր Մարկոսեանց. 21 Խանում Լազարեանց. 22 Աֆիսահատեաթ Եղիազարեանց. 23 Եղիսաբէթ Վարդանեանց. 24 Մարիամ Լալայեանց. 25 Զառվարդ Լալայեանց. 26 Զառվարդ Կեօկչայեանց. 27 Փետրոնայ Աթաբէկեանց. 28 Մարիամ Ղարաղաշեանց *):

(*) Այս անդամներից 1872 թուականի տուրք ստացուել են քսանից միայն. մնացած է ապառիկ չորս անդամից վերայ. և հրաժարուած են ընկերութեան անդամակցութենից չորս անձինք, այն է Պ. Համասփիւռ բժիշկ, Մովսէս Ռոստամեանցը, Խուդատ Բարգամեանցը և Լևոն Ղորղանեանցը, վերջինս մահուան պատճառաւ։ Իսկ սոցանում երեք անդամքը յաւելացած են ներկայ 73 թուականում

Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒ.

Ինչպէս յայտնի է "Արարատի,, ընթերցողներին, անցեալ տարի Փետրուարի 1-ին Վաղարշապատ գիւղում բացուեցաւ, հրամանաւ Վեհափառ Հայրապետի, Ս. Հռիփսիմեան Օրիորդական Դպրոցը: Հոգարարձուհուների խնամակալութեամբ, տեսչի աշխատութեամբ, վարժապետների եւ վարժուհու ջանասիրութեամբ այս դպրոցը մի տարուայ մէջ հասաւ բաւականին ծաղկեալ դրութեան: Բացի ձեռագործութիւնից, որի վերայ դարձրած էր առանձին ուշադրութիւն, ուսուցանելի առարկաներն էին՝ 1) Հայկական ընթերցանութիւն աշխարհիկ բարբառով, 2) Սրբազան պատմութիւն, 3) Հայկական վայելչագրութիւն, եւ 4) Երգեցողութիւն:

Այս տարի Ապրիլի 22-ին կատարուեցաւ Ս. Հռիփսիմեան Դպրոցի առաջին տարեդարձի տօնախմբութիւնը եւ հարցաքննութիւնը հանդերձ վիճակախաղարկութեամբ օրիորդների ձեռագործների: Դպրոցի փոքրիկ դահլիճը ներկայացնում էր Վաղարշապատի համար մի նոր եւ միանգամայն սրտաշարժ տեսարան: Մի պատի վերայ փայլում էր Նորին Վեհափառութեան մեծադիր հոյակապ պատկերը շրջապատած մեծ եւ գեղեցիկ պակով դալար ոստերից եւ ծաղիկներից հիւսած, պատկերի չորս կողմը եւ միւս

(*) Սոքանցից 1872 թուականի տուրք ստացուած են տասն և ինն անդամուհիներից, երկուքը հրաժարուած են, այն է. Եղիսաբէթ Համասփիւռը և Ղորղանեանց Զառվարդը. իսկ սոցանից եօթն անդամուհիք յաւելացած են ներկայ 73 թուականում

պատերի վերայ դեղեցիկ բարեձեւութեամբ կախած էին օրիորդների բազմատեսակ ձեռագործները, որք իբրեւ մի տարուայ յառաջադիմութիւն, արդարեւ շարժումէին ամենի զարմանքը:

Հիւրերի համար շարած էին աթոռներ, բայց այնչափ շատ էր բազմութիւնը, որ շատերը մնացել էին միւս սենեակների մէջ եւ պատշգամբի (բալկոնի) վերայ: Հանդէսը սկսուեցաւ "Հայր մեր"-ով, որը երգեցին օրիորդները բազդը ներդաշնակութեամբ:

Յետոյ տեսուչ Վահան վարդապետ Բաստամեանցը պարզ եւ ազդու խօսակցութեամբ ցոյց տուեց հեթանոսական եւ Քրիստոնէական լուսաւորութեանց մէջ եղած տարբերութիւնը վերաբերմամբ առ իգական սեռը եւ բացատրեց այն մեծամեծ օգուտները, որք յառաջ են գալի ընտանեկան, քաղաքական եւ տէրութենական կեանքի համար, երբ ուսում առած եւ լուսաւորուած են լինում կանայք: Այս հանգամանաբար նկարագրելով Հայ կանանց այժմեան անդոհացուցիչ վիճակը ըստ ամենայն մասանց, յորդորեց ժողովուրդը հոգալ իգական սեռի դաստիարակութեան վերայ եւ խնամք ունենալ օրիորդական դպրոցների վերայ:

Ի վերջոյ, տեսուչը կարդաց դպրոցի ուսումնական եւ տնտեսական կառավարութեան հաշիւը, որից, ի միջի այլոց, երեւեցաւ այսպիսի մուտք եւ ծախք:

Մուտք.	Ռ.	Կ.
Ա. Յօժարակամ տուրք Հոգաբարձուհիների.		
1). Տիկին Եւփիմէ Մազլումեանց. . .	100	
2). ,, Փափար Թաղիանոսեանց. . .	50	
3). ,, Անաստասիա Տէր Յովսէփեանց.	25	
4). ,, Նատալրա Խանազեանց. . .	20	
	195	
Բ. Միանուագ նուէրներ ուսումնասէր եւ ազգասէր տիկիններից եւ պարոններից. .	183	
Գ. Գրավաճառութիւնից.	11	40
Դ. Վաղարշապատի հասարակութիւնից Պ. Գաւառապետ Գէորգ Խանազեանցի աշխատութիւնով եւ ձեռքով.	70	
Ե. Աշակերտուհիներից վարձ ուսման համար, ամսական մի մի մանէթ.	110	
Գումար փողի	569	40

Զ. Նուէրներ գրքերով եւ զանազան բաներով:

1). Պ. Ստեփաննոս Դեմիրջեան Կ. Պոլսեցի այլ եւ այլ դասագրքեր, թուղթ եւ գրիչ, երկու սաժէն փայտ եւ այլն, արժողութեամբ բոլորը.	50	
2). Տ. Եւփիմէ Մազլումեանց Կ. Պոլսեցի մի ժամացոյց պատի եւ չորս աթոռ արժողութեամբ բոլորը.	20	
3). Վահրամ վարդապետ Մանկունի մի մեծ եւ մի փոքր թասեր արծաթի ոսկեզօծ արժողութեամբ երկուքը միասին. . . .	20	
4). Պ. Նիկողայոս Տէր Յակոբեան Տրփխիսեցի զանազան դասագրքեր արժողութեամբ.	6	
	96	

Ծախք.

1). Տան վարձ մի տարուայ համար. .	120	
2). Ռոճիկ վարժուհուն մի տարուայ համար.	65	
3). Ռոճիկ եւ հանդերձ ծառային մի տարուայ համար.	64	60
4). Հանդերձներ եւ ոտնամաններ դպրոցի 12 ծրիավարժ որդեգիրների համար.	77	
5). Գոտարաններ դասատան համար. .	30	
6). Թելեր եւ այլ պարագաներ ձեռագործութեան համար.	44	52
7). Դասագրքեր, թուղթ, գրիչ, թանաք եւլն.	15	5
8). Կապերտներ, խալիչայ, խսիրներ, ջրի ամաններ եւայլն.	10	80
9). Վարձ փայտ կրելու եւ ջարդելու. .	5	
10) Ընծայ դպրոցի վարչութիւնից վարժապետ Տէր Ղազարեանին.	50	
Գումար	481	95
Տարեկան զուտ դրամաւոր եկամտից, որ է	569	40
Հանելով տարեկան ծախքը, որ է. . .	481	95
Մնումէր Փետրուարի 1-ին զուտ դրամ. .	87	45

Հարցաքննութիւնը միանգամայն գրաւեց հիւրերի ուշադրութիւնը. փոքրիկ աղջկերքը, բոլորեքեանք սկսելով սկսելով. այնպէս վարժ եւ պարզ կարդումէին հայերէն եւ կարդացածը հասկանում եւ այնպիսի զոհացուցիչ պատասխաններ տալիս էին Սրբազան պատմութիւնից, որ արդարեւ անկարելի էր չզարմանալ

դպրոցի յառաջադիմութեան վերայ: Ամենքը շտապումէին ցոյց տալ իւրեանց ուրախութիւնը եւ շնորհակալութիւնը առատաձեռնութեամբ գնելով վիճակախաղարկութեան տոմսակները:

Նորին Վեհափառութիւնը նկատելով որ Վաղարշապատի Ս. Հռիփսիմեան Օրիորդական Դպրոցը ծաղկումէ օր ըստ օրէ եւ կամենալով միանգամայն ապահովացնել դպրոցի յարատեւ լինելութիւնը, բարեհաճեցաւ Մայր Աթոռոյ ծախսով շինել տալ յարմար տուն, որ կարժենայ 4500 մանէթից աւելի: Յոյն Մայիս ամսոյ 6-ին, կիւրակէ օրը, կատարուեցաւ այդ նորաշէն Դպրոցի հիմնօրհնութեան հանդէսը: Առաւօտեան 10 ժամին դումարուեցան դպրոցի դահլիճում երկու Եպիսկոպոս, տեսուչը, դիւղի եկեղեցու քահանայրը, Էջմիածնի դպիրները, հոգաբարձուհիքը եւ բազմութիւն արանց եւ կանանց: Երբ ամենայն բանը պատրաստ էր, հանդէսը ճանապարհ ընկաւ: Առաջուց գնումէին քառասունից աւելի օրիորդներ զոյգ զոյգ, միատեսակ պարկեշտ եւ վայելուչ հանդերձներով զարդարած եւ ձեռքին մոմեր բռնած. յետոյ խաչեր, խաչվառներ, մոմեր, երգիչներ եւ հոգեւորականք. ապա բազմաթիւ ժողովուրդը: Ճանապարհին երգիչները քաղցր ձայնով երգումէին պատշաճաւոր շարականը: Հանդէսը դադարեցաւ դիւղի եկեղեցու դաւթում, որտեղ փորած պատրաստած էր նորաշէն ուսումնարանի հիմունքը: Զատիկանց մեծ բազմութիւն կանանց եւ արանց լցրել էր եկեղեցու բակը եւ փողոցը:

Խաչալուայի հանդէսը կատարելուց յետոյ, դպրոցի տեսուչ Վահան Վարդապետը թափեց օրհնած ջուրը հիմունքի չորս անկիւնում, ուր խոյոն որմնագիրը եւ մշակները շարեցին մի բանի քարեր. ապա բարձր ձայնով եւ ազդու ոճով բացատրեց նաւ ժողովրդին թէ, ինչու ընդհանուր պատմութիւնը խօսումէ միայն այնպիսի ազգերի վերայ եւ փառաւոր անունն «Մեծ» տալիս է այնպիսի անձինքներին, որք ձեռնտու են լինում ընդհանուր մարդկութեան լուսաւորութեան: Ցիշելով որ մի ժամանակ եւ Հայոց ազգը արժանաւոր տեղ բռնած ունէր ընդհանուր պատմութեան մէջ մրտած ազգերի շարքում, մանաւանդ երբ սկսեց լուսաւորուիլ, եւ նկարագրելով սուրբ Սահակի եւ սուրբ Մեսրոպի ու նոցա աշակերտների գործունէութիւնը ազգային լուսաւորութեան ասպարիզի վերայ, ցոյց տուեց այժմեան տխուր վիճակը եւ այն վտանգները, որոնք սպառնումեն ազգի եւ եկեղեցու հաստատութեան, մանաւանդ ժողովրդի տգիտութեան կողմից: Ի վերջոյ, ցոյց տալով թէ Նորին Վեհափառութիւնը որպէս գիշեր եւ ցերեկ տքնումէ ազգային լուսաւորութեան վերայ, ատենախօսը հրաւիրեց բոլոր Հայերը թեւ եւ թիկունք լինել Հայրապետին եւ աշխատել լուսաւորութեան միջնորդութեամբ վերստին արժանաւոր տեղ բռնել ընդհանուր պատմութեան մէջ: Այս տեղ մասնաւորապէս պարզաբանելով իգական սեռի լուսաւորութեան նշանակութիւնը եւ հետեւապէս օրիորդական դպրոցների օգուտը, քարոզիչը առաջարկեց ժողովրդին մի եւ նոյն ժամանակ զգուշանալ սուտ լուսաւորութիւնից, որի հետեւանքներն են շռայլութիւն, պճնասիրութիւն, անբարոյականութիւն եւայլն, եւ որք աւելի հեշտ տարածումեն կանանց ձեռքով այլ աշխատել ստանալ այնպիսի լուսաւորութիւն, որը, բացի բարոյականութիւնից եւ մտաւոր զարգացումից, տար եւ նիւթաւոր ապահովութիւն: Ուստի բացատրելով ձեռագործութեան եւ արուեստագիտութեան մեծամեծ օգուտները, Հայր Վահան Բաստամեանը առաջարկեց հանդիսականներին նպաստամատոյց լինել Վաղարշապատի տղայոց ուսումնարանում արհեստների դասեր սկսելու համար: Այս ատենախօսութիւնը մեծ տպաւորութիւն ունեցաւ ժողովրդի վերայ: Հանդէսը վերջացաւ օրիորդների քաղցրաձայն երգեցողութիւնով: Անընդհատ «Կեցցէ Վեհափառը» հանդիսից յետոյ երկար ժամանակ թնդումէր նորաշէն ուսումնարանի հիմունքի վերայ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ ԲԻԶԱՆԴԵԱՆ.

ԾԱԿՈՐ ՊԷՑ.

Քէօչէեան Վսեմ. Ծակոր պէյի ազնուափայլ տիկինը հիւանդ գտնուելուն առթիւ, Ոստիկանութեան դուռը պարտուց հոմար բանտարկեալներէն քառասուն Հայ բանտարկելոց պարտքերն ամբողջապէս վճարելով ազատած է զիրենք.

Առաջին անգամը չէ որ՝ Քէօչէեան ընտանիքին այս մարդասիրական առատաձեռնութիւնը կը լսեմք, որ գրեթէ միշտ այսպիսի առաքինական նուիրատուութեամբք աղքատին արտասուքը սրբ-